



Ministry of
Territorial Administration
and Development,
Republic of Armenia



ԵՄ-ն ԽԹԱՆՈՒՄ Է ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 20, 2016, Երևան (Հայաստան) Քաղաքների կայուն զարգացմանը և Արևելյան Համագործակցության երկրների տնտեսական աճին ուղղված ԵՄ-ի նախաձեռնություններն ու գործիքները լինելու են «Արևելյան Համագործակցության երկրներում կայուն զարգացման խթանումը» երկօրյա Բարձրաստիճան Միջազգային համաժողովի ուշադրության կենտրոնում: Համաժողովը կկայանա 2016 թվականի հոկտեմբերի 26-ից 27-ը Երևանի Մարրիոթ հյուրանոցում՝ Ամիրյան 1, հասցեով:

Արևելյան Համագործակցության երկրների կենտրոնական, ռեգիոնալ և տեղական պաշտոնյաները առաջին անգամ կհավաքվեն Հայաստանի մայրաքաղաք Երևանում՝ քննարկելու տարածքային ղեկավար մարմինների և քաղաքացիների կարողությունների զարգացմանը վերաբերող առավել հրատապ հարցերը, վարչական բարեփոխումներն և ապակենտրոնացումը՝ որպես տեղական կայուն զարգացման արդյունավետ գործիք, ինչպես նաև Արևելյան Համագործակցության տարածաշրջանում տեղական տնտեսական զարգացմանը մասնակցական մոտեցման քաջալերումը:

Համաժողովը կազմակերպված է Եվրոպայի Հանձնաժողովի, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Արևելյան Համագործակցության Տարածաշրջանային և Տեղական Մարմինների կոնֆերանսի (CORLEAP) և «Քաղաքապետերի Արևելյան Դաշնագիր» (CoM East) նախաձեռնության համատեղ ուժերով:

Ողջույնի խոսքով հանդես կգան ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարար պարոն Դավիթ Լոթյանը, Արտակարգ և լիազոր դեսպան, Եվրոմիության պատվիրակության ղեկավար պարոն Պյոտր Էնթոնի Սվիտալսկին և Երևանի Քաղաքապետ պարոն Տարոն Մարգարյանը: Հիմնական զեկուցող՝ Եվրոպական Հանձնաժողովի Արևելյան Հարևանության, Հարևանության և Ընդլայնման Բանակցությունների (DG NEAR) տնօրեն պրն. Լուրենս Մերեդիթը, կներկայացնի Արևելյան Համագործակցության երկրներում Եվրոպական Հարևանության Քաղաքականությունը և տեղական տնտեսական զարգացմանն ուղղված աջակցության մեխանիզմները:

Համաժողովի ընթացքում Եվրոպական Հանձնաժողովը կմեկնարկի Արևելյան Համագործակցության երկրների «Քաղաքապետերի Դաշնագիր» ծրագրի երկրորդ փուլը և «Քաղաքապետերը Հանուն Տնտեսական Չարգացման» նոր նախաձեռնությունը (M4EG)՝ ուղղված համապասխանաբար Էներգետիկ արդյունավետությանը և գործարար ոլորտին: Այս ծրագրերը նպատաուղղված են խթանելու համագործակցությունը տեղական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև՝ հաշվետվողականության բարձրացման, տեղական զարգացմանն ուղղված կանոնակարգերի ստեղծման և ներդրման, ինչպես նաև արդյունավետ և էֆֆեկտիվ վարչական կարողությունների լավագույն փորձի փոխանակման համար: Ի լրումն, այս գործընթացներն սերտորեն փոխկապակցված են, քանի որ տնտեսությունների Էներգատարության նվազեցումը կդարձնի դրանց ավելի մրցունակ՝ հանգեցնելով տեղական աշխատատեղերի ստեղծմանն ու կայուն զարգացմանը:

Համաժողովի առաջին օրն ամփոփվելու է հանդիսավոր Ստորագրման Արարողությամբ, որի ընթացքում 30 քաղաքապետեր կմիանան «Քաղաքապետերը հանուն Կլիմայի և Էներգետիկայի» Դաշնագրին:

Հաջորդ օրը նվիրված է լինելու Արևելյան Համագործակցության երկրների «Քաղաքապետերը հանուն Կլիմայի և Էներգետիկայի» Դաշնագրի հեռանկարների և առավելությունների բնարկմանը: Մասնակիցները նաև կանդիդատան «Քաղաքապետերի Դաշնագրի Օրինակելի Նախագծեր» ծրագրի ձեռքբերումներին և նախնական արդյունքներին:

Համաժողովը կապահովի եզակի հնարավորություն ընդլայնելու համատեղ ջանքերը՝ կայուն քաղաքային զարգացման և Արևելյան Համագործակցության քաղաքներում քաղաքային ենթակառուցվածքների արդիականացման հաջողված փորձի փոխանակման համար:

ՉԼՍ ներկայացուցիչները հրավիրված են մասնակցելու մամլո-ասուլիսին, որը կկայանա 2016 թվականի հոկտեմբերի 26-ին, ժամը 10:00-ին, ինչպես նաև ստորագրման արարողությանը՝ ժամը 17:45 -ին Երևանի Մարրիոթ հյուրանոցի « Տիգրան Մեծ » սրահում:

Պահանջվում է նախնական հավատարմագրություն, որը բաց է մինչև 2016 թվականի հոկտեմբերի 25-ին, ժամը 15:00-ն abegloian@gmail.com էլեկտրոնային փոստով կամ +374 99881018 հեռախոսահամարով: Լրագրողների մասնակցությունը համաժողովի ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումներին ողջունելի է: Հաջորդ օրը՝ 2016 թվականի հոկտեմբերի 27-ին, մամլո տաղավարը գործելու է միջոցառման ողջ ընթացքում:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապ հաստատել Քաղաքապետերի Արևելյան Դաշնագրի Հաղորդակցության գծով ղեկավար Տատյանա Դերեվյանկինայի հետ, հեռ. + 380 44 332-66-08, Էլ. Փոստ՝ tatiana.derevankina@eumayors.eu

<http://www.eumayors.eu>, <http://www.soglasheniemerov.eu>

Տեղեկանք՝

Քաղաքապետերը հանուն Կլիմայի և Էներգետիկայի Դաշնագիրը Եվրոպական Միության քաղաքային կլիմայական և էներգետիկ նախաձեռնություն է, որը միավորում է տեղական, ռեգիոնալ և ազգային պետական մարմինները, որոնք կամավոր հիմունքներով ստանձնում են Եվրոմիության կլիմայական և էներգետիկ նպատակների իրագործումը: «Քաղաքապետերի Դաշնագիր» (CoM) նախաձեռնությունը մեկնարկել է Եվրոպական Հանձնաժողովի կողմից 2008 թվականին, 2020 ԵՄ Կլիմայի և Էներգետիկայի փաթեթի ընդունումից հետո: Հիմնվելով Քաղաքապետերի Դաշնագրի հաջողության վրա, 2014 թվականին հիմնադրվել է «Քաղաքապետերը ադապտացվում են» նախաձեռնությունը, որի նպատակն էր ներգրավել քաղաքները կլիմայի փոփոխություններին հարմարվելու ուղղված միջոցառումների իրականացմանը: 2015 թվականի վերջում երկու նախաձեռնությունները միավորվեցին նոր՝ Քաղաքապետերը հանուն Կլիմայի և Էներգետիկայի Դաշնագրի ներքո՝ որդեգրելով ԵՄ 2030 նպատակները և միասնական մոտեցում կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանն ու ադապտացմանը: Ավելի քան 210 քաղաքացի ներկայացնող շուրջ 7000 ստորագրող կողմերով, այն դարձավ կլիմայի և էներգետիկայի ոլորտում աշխարհի ամենախոշոր նախաձեռնությունը:

Քաղաքապետերի Արևելյան Դաշնագիրը (CoM East) ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախագիծ է, որի նպատակն է Արևելյան Համագործակցության երկրներում ներկայացնել ԵՄ կլիմայի և էներգետիկայի նախաձեռնությունը :Քաղաքապետերի Արևելյան Դաշնագիրը աջակցում է տեղական պետական մարմիններին էներգետիկայի կայուն զարգացման կանոնակարգերի ներդրման գործում՝ նվազեցնելով նրանց կախվածությունը հանածո վառելիքից, բարելավելով էներգետիկ ոլորտի անվտանգությունը, և խթանում է իրենց ներդրումը կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանը և ադապտացմանը:

Քաղաքապետերը Հանուն Տնտեսական Չարգացման (M4EG) Եվրոպական Միության ապագա նախաձեռնությունն է, որը ոգեշնչված է Քաղաքապետերի Դաշնագրի գաղափարով և դրա հաջողությամբ: Որպես այդպիսին, ծրագիրը կաջակցի Արևելյան գործընկերության երկրների տեղական իշխանություններին դառնալու տնտեսական աճի եւ աշխատատեղերի ստեղծման ակտիվ աջակից՝ ամրապնդելով իրենց տեխնիկական հմտություններն ու կարողությունները՝ նպատակ ունենալով ներդրել իսկապես տեղական տնտեսական ռազմավարություններ, որոնք համապատասխանում են արդյունավետ վարչարարության և գրագետ ֆինանսական կառավարման սկզբունքների վրա:

